

պալատին յար եւ նման պալատ մը կառուցանել Պաղտատի մէջ, եւ իբր թէ զիշերուան մը մէջ կը կատարուի այս հրամանը, եւ պալատը ըստ նմանութեան իլլաթի պալատին՝ կը կահաւորուի, եւ նոյնիսկ նման «գորգեր եւ հիւսուածեղէններ սփռուած էին»⁽³⁶⁾։ Իլլաթ վանայ ընին՝ որով եւ Հայաստանի մէջ՝ Սելճուքեան մայրաքաղաք մըն էր։ Իլլաթի իլաթունն ալ ծագմամբ Սելճուք էր։ Սակայն այս օտար տիրակալները, որոնք եկան եւ բռնութեամբ տիրեցին Հայաստանի՝ տիրապետուեցան հայ մշակոյթէն։ Անոնց պալատները, դամբարանները, մզկիթները, մետրեսէները հայ արուեստի եւ հայ արհեստաւորի գործեր են։ Եւ անտարակոյս այդ շէնքերուն կահն ու կարասին, հիւսուածեղէնները, գորգերը նոյնպէս հայ արտադրութիւնն են, ինչպէս որ անոնք հայ արտադրութիւններ էին Սելճուքներուն Հայաստան մտնելէն դարեր առաջ։ Տարակոյս չունիմ որ անոնց սովորութեանց կորիզը կը կազմէր հայկական նիստ ու կացը։ Զարմանալի է որ ցարդ ոչ մէկ փորձ եղած է զերեւել Հայ-Սելճուք փոխ յարաբերութեանց պատմութիւնը, բան մը որ իրապէս արժէքաւոր եւ պարզաբանող պիտի ըլլայ։

Josafa Barbaro վենետիկցին ԺԵ դարուն Ուզուն Հասանի մէկ խրնճոյքը կը նկարագրէ, ըսելով թէ «գորգերու վրայ փռեցին սեղանին սփռոցները»։ Ուզուն Հասան պատմութեան ծանօթ է նաեւ իր Շահի Արաման (Թաղաւոր Հայոց) տխուր սով։ Օտարները, ինչպէս վենետիկցիք, անոր Արմէնոյ յորջորջումը կու տային։ Գորգերու վրայ սեղան սփռելու այս հին սովորութենէն իսկ ծագած է «սեղան սփռել» ոճը։ Կոստանդին Երզնկացի տաղասացը ԺԳ դարուն արդէն գործածած է արտայայտութեան այդ ձեւը իր մէկ տաղին մէջ՝ ըսելով.

Իրենց փռեն գեղեցիկ խօն,

Եւ լի սիրով են կշտացեալ⁽³⁷⁾։

Խօն կամ խալ³⁸ պարսկերէն է, որ Գէորգ զպրի բառարանին համաձայն՝ սեղան կը նշանակէ։

Ազնուականներուն սփռուած գորգի վրայ ճաշելը Թուրքերուն ալ յատուկ էր։ Այդ մասին կը վկայէ A. G. Eusbequius իր ուղեգրութեան մէջ (1554–1559)։ Ան խօսելով փաշաներու խնճոյքին մասին ի Կ. Պոլիս, կ'ըսէ. «կաշիէ սփռոց մը, զետինը սփռուած երկար գորգի մը վրայ» կը կազմէ ճաշասեղանը⁽³⁸⁾։

Ազնուականներու մօտ գորգի գործածութեան մասին մատենագրական վկայութիւններէ դատ ունինք նաեւ մանրանկարչական փաստեր։ ԺԳ դարուն սկիզբէն վախտանդ Ումէկեան Հայ իշխանին մէկ մանրանկարը ցոյց կու տայ զինքը գահոյքի մը վրայ նստած, իսկ

(36) Անգլ. Թարգ. Լոնտոն, 1932, հատ. Ա. էջ 388։

(37) Հ. Մ. Պատուրեանի հրատ. Տաղ թիւ ԺԵ։

(38) The Four Epistles... London, 1694, p. 319.